

ԵՐԵՎԱՆԻ ԹԻՒՆՈՒՆ ԳՐԻԳՈՐ ԲՐԵՏՈՒՆԻ

Տարեկան գին 10 ռուբլի. կէս տարեկան 5 ռուբլի.  
Առանձին համարները 5 կոպէկով.  
Թիֆլիսում գրքուէն են խմբագրատան մէջ.  
Մեր հասցէն. Тифлиς, Редакция „Мшакъ“.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(բացի կիրակի և տօն օրերէն).  
Յայտարարութիւն ընդունուում է ամեն լեզուով.  
Յայտարարութիւնները համար վճարում են  
իւրաքանչիւր տողատողին 10 կոպէկ.  
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

## «ՄՇԱԿ» ԼՐԱԳԻՐԸ

Պատասխան 1-ից մինչև տարեկան վերջը  
կարժենայ Հիւն Գրքուէն.  
Գիտել Թիֆլիս, редакция „Мшакъ“.  
Այն անձինք, որոնք վճարել են մինչև  
պատասխան 1-ը և ցանկանում են շարունակել  
լրագիր ստանալը, թող հոգ տանեն  
վարորդ յայտնելու այդ ժամին խմբագրու-  
թեանը, որպէս զի լրագրի աստիճանը  
չընդհանալիս.  
Մէկ ամսով բաժանորդը պիտի ցան-  
կացողները վճարում են Մէկ ռուբլի.  
Ապագիկ բաժանորդագրութիւն չէ ըն-  
դունվում:

## ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Կանանց գիւղատնտեսական կուրսը. — Ներ-  
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մարտի 9-ի զեմ. Մատենա-  
գրութիւն. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-  
ԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. — ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.  
— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲՈՆԱՄԻՐԱԿԱՆ.  
Թաւրիզի առաջնորդական ընտրութիւնը: Լի:

## ԿԱՆԱՆՑ ԳԻՒԼԱՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Այն կանանց համար, որոնք չեն բա-  
ւականանում միջնակարգ դպրոցների  
կրթութեամբ, այլ ցանկանում են աւելի  
բարձր կրթութիւն ստանալ և պրեկտորի  
գիտութիւն ձեռք բերել, այժմ բացվում  
է մի նոր ապարդէ: Առաջինը միջնակար-  
գից Պատերազմից հետո կը բացվեն կա-  
նանց գիւղատնտեսական կուրսի խումբ-  
ներ, որոնք կուսենան երկու տարեկան  
դասընթացը:

Որպէս զի մասնագիտական կրթու-  
թիւնը գործադրելի լինի կանանց մէջ,  
կուրսերի վարչութիւնը այնպէս է կազ-  
մակերպել զորքը, որ ուսանողներին  
ձմեռային ընթացքում կը լսեն դասաւո-  
սութիւնները զանազան գիտական առար-  
կաներից և ուրեմն կը բացվեն մասնա-  
գիտութեան տեսական մասը, իսկ ամառ-  
այ աւելի մանր ընթացքում կուսենան

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԹԱԿԻԶԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ ԸՆԾՐՈՒԹԻՒՆԸ

Մեր խմբագրութեան մէջ ստացված թղթա-  
կութիւններից երեւում է, որ թաւրիզում շու-  
տով կայանալու է Վեհափառ Կաթողիկոսի  
կօնդակի համաձայն պատգամաւորական ժո-  
ղով Ստրպատական թեմի համար առաջնորդ  
ընտրելու:

Մեզ գիտման են լինում մասնացոյց ա-  
նելու արժանաւոր կանգնողներին վրա:

Անկասկած, Ստրպատականի պէս խաւարի  
և տգիտութեան մէջ խարխափող բազմաթիւ  
թեմի վարդապետները ունեն գործունայ,  
հուանդուն, իր պաշտօնին անձնուէր և իր  
կոչման բարձրութեան վրա կանգնած մի  
հովուի: Նա մինչև այժմ քաղցրութեամբ և  
սրբութեամբ պահպանում է Սահակ եպիս-  
կոպոս Սաթմոնեանի, Անդրեասի և Մու-  
շեղեանի պէս արժանաւոր առաջնորդ-  
ների յիշատակը: Այդ երեք առաջնորդ-  
ները իրանց առաջնորդական գործերով, իրանց  
ուսումնասիր և բարոյական ուղղութեամբ  
անջնջելի հետքեր են թողել պարսկահայերի  
կեանքի մէջ: Գործունէութեան հոանդի և ա-  
շխուհեան կողմից հռչակ է ստացել և հան-  
գուցեալ Ստեփան եպիսկոպոս Միթրաքեանը:  
Թէև մաքրութեան, շիտակութեան և ժողովու-  
րատէր—անհաշտութեան կողմից նա չէ  
կարող հաւատարմել առաջին երեքին, բայց  
յամենայն դէպս, այդ չորս առաջնորդներից  
յետոյ, որոնք արտայայտեցին հոանդուն գոր-  
ծունէութիւն, Ստրպատականի թեմի ժողո-

ղործական պարագայութիւնը «Պետոնեան»  
կոչված կայունացրում:

Հարց է ծագում, թէ արդեօք հայ կա-  
նանց համար կայ գործելու ապարդէզ  
գիւղատնտեսութեան շրջանում:

Եթէ վերցնենք մեր ապահոված դա-  
սակարգը, մենք կը տեսնենք, որ այդտեղ  
գիւղատնտեսութեամբ պարագայութեան  
թիւը ասկաւաթիւ է: Հայերի մէջ կա-  
լուածատէրեր չը կան մեծ թուով, այն-  
պէս, ինչպէս, օրինակ, մեր հարեան վրացի-  
ների մօտ: Բայց և այնպէս գոյութիւն  
ունի կալուածատէրերի մի որոշ թիւ, որ  
պահանջ ունի բարձրագոյն իր տնտեսու-  
թեան վիճակը: Իսկ եթէ հաշուէ առնենք  
այն ընտանիքները, որոնք ունեն այգի-  
ներ մեր երկրի գանաղան մասերում,  
մենք կը տեսնենք, որ քրանց թիւը իս-  
կապէս շատ պատկառելի է: Եւ շատ  
տնտեսութիւններ քաղաքային են ու ա-  
ռաջ չեն գնում հարկի: Միայն այն հան-  
գամանքի, որ տանտիկներ ինքը գաղա-  
փար չունին գիւղատնտեսութեան կատա-  
րելագործութիւնները մասին:

Եթէ գիտենք մեր ժողովրդական մաս-  
ային, մեր գիւղական դասակարգին, կը  
տեսնենք, որ այդտեղ հայ կիրն ընդար-  
ձակ կերպով զբաղված է գիւղատնտե-  
սութեամբ իր աղաժարութ հետ միասին,  
բաժանելով տան աշխատանքը որոշ եզա-  
նակով: Եւ նոյն իսկ կան գիւղատնտե-  
սութեան այնպիսի ճիւղեր, որտեղ գոր-  
ծունէութեան գլխաւոր դերը պատկա-  
նում է ոչ թէ աղամարդիկ, այլ գիւղա-  
կան կնոջը: Այդպէս են, օրինակ, կաթնա-  
տնտեսութիւնը, բանջարաբուծութիւնը և  
այգեգործութեան մի մասը:

Այն կրթված հայ կանայք, որոնք յաբ-  
մարութեան, կարողութեան և սէր ունեն  
իրանց նուիրելու գիւղատնտեսական պա-  
րագայութեանը, պէտք է աչքի առաջ  
ունենան, որ գիւղատնտեսութեան զար-  
գացման նպատակով, նրանք ծանոթիկ և  
աշակից են հանդիսանում մի այնպիսի  
զբաղմունքի զարգացման, որ մեր ժո-  
ղովրդի գլխաւոր ապրուստամիջոցն է:

Վերջը չը կարողացաւ մինչև այսօր ունենալ  
մի առաջնորդ, որի պաշտօնավարութիւնը լի-  
նէր նախ առական, ապա նուիրված թաղովրդի  
և հօտ բարոյութեան ու մտաւոր, հոգեւոր  
բարոյական զարգացման գործին:

Իսկ թեմի գործիչները չափազանց եղբիւր է.  
զարգացնելով անբարեկարգ և անխնամ վիճակի  
մէջ, նոյն իսկ թաւրիզում, Լիւալա թաղի  
զարգացնելով ամբողջ տարի վաղված էին. օրի-  
նաւոր, կրթված բանաստեղծի փառաբան աղ-  
ժողովուրդը շատ տեղ, մասնաւոր խուլ ան-  
կրթներում, մնացել է անհոգի, անպաշտպան:

Արդ, թվ է արժանաւոր կանգնողաւ Ստր-  
պատականի թեմի առաջնորդութեան: Ահա մի  
գիտաւոր բուծելի հարց:

Պէտք է իմանալ, որ Պարսկաստանի հան-  
գամանքները անպայման պահանջում են, որ  
թեմակալ առաջնորդը լինի եպիսկոպոս: Վար-  
դապետ—առաջնորդը չունի այն նշանակու-  
թիւնը, ինչ որ եպիսկոպոս—առաջնորդը, ոչ  
միայն պարսիկ կառավարութեան, այլ և ժո-  
ղովրդի աչքում:

Գծադրաբար, մեր եպիսկոպոսների ներկայ  
կազմի մէջ մենք, բացի մի անձնուորութիւնից,  
չենք տեսնում մէկը, որ կարողանար ամեն  
կերպով համապատասխանել վերոյիշեալ պա-  
հանջներին: Այդ անձնուորութիւնը—Արիստա-  
կէս եպիսկոպոս Սեդրակեանն է. սակայն,  
Ստրպատականի թեմը մի անգամ արդէն ընտ-  
րեց նրան առաջնորդ և նա հրաժարվեց. այժմ  
դարձեալ գիտաւորութիւն կայ թաւրիզում  
մտցնել Սեդրակեան սրբազանին կանգնու-  
ման շարքում: Ստիպված ենք յայտարարել  
ի գիտութիւն պատգամաւորական ժողովի, որ  
Սեդրակեան սրբազանը, մինչև որ վերացված  
չեն այն պատճառները, որոնք ստիպեցին

կրթված Գրիգ Ժողովուրդի գիւղին կաւե-  
լացնէ գործողների թիւը այնտեղ, ուր  
նրանք ներկայումս շատ ասկաւաթիւ են  
և որտեղ նրա քայրերի մի անհամար  
բաղնիքներ սպասում է օգնող ձեռքերի,  
որոնց շնորհիւ նա կարողանայ իր կեանքի  
պայմանները թեթեւացնել և հոգեկան  
միջոցաւորութիւններ ստեղծել իր համար  
գաւառական այն խուլ անկրթներում,  
ուր նա ապրում է դարերից ի վեր ան-  
վերջ հոգեւոր ծանրութեան տակ:

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԽՈՒՐԴԱՅԻ ԳԵՄ

Բազուի լրագիրները հաղորդում են, որ  
գլխաւոր բժշկական վերահսկիչ Ֆօն-Անդրեյը,  
կովկասեան բժշկական մասի կառավարիչ  
բժշկապետ Ֆեոփանովը, հասնողական բժշկի  
Մեմենովը, Բաղուի Միքայէլեան հիւանդա-  
նայի պրօզէկտոր Ապալինսկին և հիւանդանոցի  
բժշկական բժշկիները ընտրութեան հն-  
թարկելով հեռագիրներում արդէն յիշված հի-  
ւանդ Բէշկանիովի արտաթորութիւնը, գտան  
նրա մէջ ստորակէտաձև բակտէրիաներ, որոնց  
յիշված անձնից կազմված խորհուրդն ընդու-  
նեց իր խորհրայի բացիներ և հիւանդին  
ձանաչեց խորհրայով վարակված: Պրօզէկտորը  
շարունակում է արտաթորութեան վերլուծումը:  
Հիւանդը առողջանալ է սկսել:

— «ՅԱՅԱՅ» 06. — Լրագրի յուլիսի 29-ի թը-  
ւում կարդում ենք հետեւի կտորը մեզ  
ապաւանցող դաժան հիւրի՝ խորհրայի մասին:

«Վերոյիշեալ լուրեր են գալիս Պարսկաս-  
տանից. խորհրայի համաճարակը, Շահերի մայ-  
րաքաղաքում թէ՛ շրջանում թուլանալով, սաստ-  
կանում է մեր գրացի Սորաանում: Յուլիսի  
14-ին երկրին կառավարչապետը մի հեռագիր  
ստացաւ Մէշէքի մեր գլխաւոր հիւանդանոցի,  
որով հաստատվում է այդ քաղաքում խոր-  
հրայի երևալը, ուր դրանից արդէն մեռել են  
20 մարդ: Կասկած չը կայ, որ ազգաբնակու-  
թիւնը սարսափով սպասում է տարափոխիկ  
հիւանդութեան երևալուն այստեղ՝ Անդրկաս-  
պեան երկրում: Դրա համար էլ չէ կարելի

նրան հրաժարվել առաջին անգամ, այժմ ևս  
չի ընդունի նոր ընտրութիւնը, հետեւաբար,  
պատգամաւորական ժողովը պէտք է հանէ իր  
ցուցակից նրա կանգնուածութիւնը:

Մնում է ուրեմն ընտրելիներ որոնել վար-  
դապետների ցուցակի մէջ, մի կողմ թողնելով  
եպիսկոպոսական հարցը, մասնաւորապէս, հա-  
ւանդին, ընտրեալը կը ձեռնադրվի եպիսկո-  
պոս Վեհափառ Կաթողիկոսի կողմից:

Արդ, ներկայումս, մեր բոլոր վարդապետ-  
ների մէջ, մենք մեր կողմից միակ յաբմարը  
և արժանաւոր՝ ստանձնելու Աստուածաւոր  
թեմի առաջնորդի պաշտօնը, համարում ենք  
Մեծաւոր վարդապետ Տէր-Մովսէսեանին: Եթէ  
Ստրպատականի թեմի առաջնորդութեան հա-  
մար պահանջվում է մի հոգեւորական—ուսուցիչ,  
լեզուագէտ, ուսումնական, ոչ-սիւմնական,  
ժողովրդի և եկեղեցու շահերին իսկական նա-  
խանձանդիր ու կարող՝ ղեկավարել զարգաց-  
կան գործը, դարձ տալ ժողովրդի հոգեւոր,  
մտաւոր—բարոյական գործին—դա, մեր կար-  
ծելով, ներկայ պայմանների մէջ, մաքիստ  
Մեծաւոր վարդապետ Տէր-Մովսէսեանն է:

Կայ և մի այլ վարդապետ—Բաղատ վար-  
դապետ Վարդապետները, որի մասին նոյն-  
պէս խօսում են թաւրիզում, իրեն հաւանա-  
կան կանգնուած: Բոլորովին համակրելով  
այդ վարդապետի կանգնութեան—մենք  
նրան ևս արժանաւոր ենք համարում առաջ-  
նորդութեան համար—մենք պէտք է միայն  
ստենք, որ ոչ մի միտք չը կայ Բաղատ վար-  
դապետին հեռացնել իր այժմեան տեղից և  
պաշտօնից, քանի որ նա իր թեմում ահագին  
գործեր ունի կատարելու: Պէտք է թողնել  
նրան աւարտել սկսածը:

Հ. Ա.

չողովուն նահանգի գործադիր սանիտարական  
յանձնաժողովի այն հոանդուն կարգադրու-  
թիւնները, որոնք սերտ կերպով կազմված են  
ազգաբնակութիւնը համաճարակից ազատելու  
գործի հետ:

Յետոյ լրագիրը յիշում է գործադիր յանձ-  
նաժողովի ձեռք առած մի քանի միջոցները և  
աւելացնում, որ ներքին գործերի միջաւորու-  
թեան ծախքով այժմ հիմնվում են բժշկական  
վերահսկողութեան տեղեր կրանաւորութեան,  
Հասան-Ղուլիում, Զիկիլարում և Գաուգա-  
նում, ուր սահման անցնող բոլոր մարդկանց  
և իրերը ենթարկելու են մանրակրկիտ ըն-  
նութեան: Բացի դրանից՝ երկրի կառավար-  
չապետը հրամայել է սահմանադրւ գործերի  
հրամանատարին՝ չը թողարկել ոչ մի կէտից  
ոչ ոքի անցնելու, բացի յիշված 4 կէտերից:  
«Բայց որովհետեւ Մէշէքում խորհրայի երե-  
ւալն անկասկած է, շարունակում է լրագիրը,  
դրա համար կառավարչապետը յուլիսի 13-ին  
հեռագրով խորհրդի թոյլտուութիւն բժշկական  
վերահսկողութեան կէտեր հիմնել և Չատա-  
յում, Կոյա-Կասիրում, Արթուրում, Միլիսա-  
բաղում, Չապանում և Մէրախում, իսկ մինչև  
այդ բոլոր նոր բժշկական վերահսկողութեան  
կէտերի էապէս հիմնարկելը, փակել Պարս-  
կաստանի բոլոր սահմանները, բացի վերում  
յիշված 4 կէտերից»:

Յետոյ լրագիրը յոյս է յայտնում, որ մի-  
նիստութիւնը չի մերժի կառավարչապետի  
ինդիքը, որով և ազգաբնակութեան երկիւղը  
մի քիչ գոնէ կը մեղմանայ:

— «ԱՏԽԱԾԱԾ» լրագիրը հաղորդում է, որ  
Ասիաւորի սանիտարական յանձնաժողովը  
անհրաժեշտ համարեց հրաւիրել պատրաստ-  
ված գիւղական բոլոր՝ օրական 3 ռուբլի  
վարձով՝ հաղորդութեան կատարելու բժշկական  
վերահսկողութիւն նշանակված տեղերում:

— Բազուի լրագիրները ներկայացնում են  
մանրամասն հաշիւ տեղական նահանգական  
գործադիր-սանիտարական յանձնաժողովի յու-  
լիսի 21-ի նիստի մասին: Նախագահը՝ ինչպէս  
ամեն տեղ, եղել է նահանգապետը. մասնակ-  
ցել են բժշկական գլխաւոր վերահսկող Վ.  
Կ. Ֆօն-Անդրեյը, Կովկասի բժշկական վարչու-  
թեան կառավարիչ Մ. Ն. Ֆեոփանովը և պ.

## Լ Ի

(Զինական պատմութեան վ. Դորոշիլի)

Լին դահիճ էր:  
Եւ հիւանալի դահիճ:  
Երբ, քաղցից մեռնելով, նա ստանձնեց այդ  
պաշտօնը, — երկուց գլխատիւ ամենքին, ում  
որ հրամայեցին:

— Գլուխը դառաւորն է: Ես միայն նրա  
ձեռքն եմ, ասում էր նա իր երգման ժամա-  
նակ:

Դրանից յետոյ Լին չէր զգում ոչ գուլթ, ոչ  
սարսափ, ոչ զգուհեմ, ոչ էլ զղջում:  
— Դա իմ ձեռքը չէ: Դա դառաւորի ձեռքն  
է: Դառաւորը անում է իր ձեռքով այն, ինչ  
որ կամենում է տէրը:

Դառաւորը գիտէ, դառաւորն էլ պատաս-  
խանատու է:

Լին հանգիստ էր:  
Ամեն շաբաթ նա մի քանի գլուխ էր կտրում  
շուկայում:

Եւ նա գնում էր այդ գործին այնպէս, ինչ-  
պէս առաջ գնում էր արկղեր և քսակներ  
կրելու:

Նրա խիղճը հանգիստ էր:  
Լին աշխու էր:

Նա պարծենում էր այն բանով, որ երբեք  
ոչ ոքի չէ ստիպել տանջվելու:

Նա գլուխը թոցնում էր մի հարուածով:  
Որպէս զի այդպիսի հարուած հասցնելու  
հատուկութիւն ձեռք բերէ, նա երկար ժամանակ  
վարժվում էր սկզբում գերաններին, յետոյ խո-  
զերի վրա, — խոզերին մասվածաների էին  
յանձնում նրան, որ գլուխները կտրէ՝ դրված  
կարեկցութիւնից դէպի ապագայ յանցաւոր-  
ները, որոնց պէտք է զլխատէ Լին:

Անրէպի հետ եկած անձերը—պ.պ. Բուխարին, Բուս և Բոխիլ Գրաքերը:

Պ. Նահանգապետը բաց է անում նիստը և խնդրում, որ պ. Անրէպը անէ իր դիտողութիւնները Բագուի առողջապահիկ վիճակի մասին և առաջարկէ իր հեղինակաւոր կարծիքը՝ այդ պակասութիւնները վերացնելու համար:

Գլխաւոր վերատեսուէր յայտնում է, որ իր գործը չէ միջոցներ առաջարկել. ինքը միայն կակնարկէ բոլոր իր նկատած պակասութիւնները և կը հակէ, թէ ինչպէս, ինչ եռանդով և որքան ճշգրտագոյնութեամբ կատարվում են պետական կարգադրութիւնները համաճարակների դէմ:

Հետեւել անգամ մենք կը ծանօթացնենք մեր ընթերցողներին պ. Անրէպի հեղինակաւոր կարծիքի հետ: Այդ կարծիքը շատ հետաքրքրական է և այն պատճառով, որ Կովկասի համարեա բոլոր քաղաքները սանիտարական տեսակէտից Բագուից աւելի լաւ վիճակի մէջ չեն:

Խ.

Մ Ֆ Տ Ե Ն Ա Պ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

Ilse Frapan: Die armenische Frage. Genf. 1904. Իլզէ Գրապան. Հայկական հարցը: Ժնև 1904 թ.

Վերոյիշեալ վերնագիրը կրող աշխատութիւնը պատկանում է գերմանացի յայտնի վիպասանների տիկին Իլզէ Գրապան-Ալիունեանի գրչին, որը գերմանական վիպական գրականութեան մէջ շատ պատուաւոր տեղ է գրաւում: Նրա «Հայկական հարցը» վերնագրով վերջին աշխատութեան բովանդակութիւնը կազմում են այն դասախոսութիւնները, որ յարգելի տիկինը կարգադրել է յօգուտ թիւրքահայերի Գերմանիայի գիտնական քաղաքներում (Լայպցիգ, Համբուրգ, Դարմշտադտ) կայացած հայկական միտնգներում կամ Կոնֆերանսներում և որոնց մասին մենք Գերմանիայից ժամանակին հաղորդել ենք «Մշակի» ընթերցողներին:

Փրապանի աշխատութիւնը կարելի է երկու մասի բաժանել: Առաջին մասում նա ծանօթացնում է ընդհանրապէս հայերի և մասնաւորապէս թիւրքահայերի իրականութեան հետ, իսկ երկրորդում նա միջոցներ է առաջարկում այդ իրականութիւնը ցանկալի կերպով փոխելու: Դրա համար հեղինակը կոչ է անում Գերմանիայի հասարակական կարծիքին և ձեռնհաս գործադրողներին, հիմնել մի լիզա թիւրքահայաստանի համար: Եւ որպէս զի այդ լիզան ապագայում աշխուժութիւն ունենայ, յարգելի Փրապանը անձամբ դիմել էր գերմանացի մի քանի աշխարհաշույն գիտնականներին այդ գործի նախաձեռնութիւնը իրանց վրա յանձն

վելու: Լին բարձր արժեքների հասաւ այդ գործի մէջ:

Դատապարտվածը չէր ձեռք բերում մէջբերել կապակցութիւնը:

Դահլիճի օգնականը բաշտում էր գլուխը ծածկելով, Լին սրով հարուստը տալիս էր, գլուխը մի կողմէն էր ընկնում, և ընդհանրապէս արիւնքի երկու հոսանք, ինչպէս տաք ջրի երկու շատրվան, ցայտում էր ամբողջ վրա:

Այդ բոլորը կատարվում էր մի վայրկեանում: Այնպէս որ միւս դատապարտվածները, որոնք շարքով չէրան, էին, աղաղակում էին ամբողջի հետ միասին ի նշան հաւանութեան: Խօս:

Մասամբ, բացէ՛ք, այն պատճառով, որ հարուստը, իբրեւի, հրաշալի էր: Մասամբ այն պատճառով, որ ուզում էին դահլիճի գովաբանել, որպէս զի նրանց հետ էլ այդպէս շուտ վերջացնէ և չը ստիպէ տանջվել մահից առաջ:

Բայց Լին գիտարար դահլիճ էր: Նա ոչ որի չէր ստիպում տանջվելու:

Նա մինչև անգամ չէր նայում, թէ ով էր «խօ» աղաղակում:

Նրա համար միթէ մի և նոյն չէր: Դա իմ ձեռքը չէ, դա—դատաւորի ձեռքն է:

Լին միայն պարանոցներ էր տեսնում, գարկում ու զլխատում էր:

Այդպէս նա շատ գլուխներ էր կտրում, և չէր իմանում, չէր հետաքրքրվում իմանալ, թէ ովքեր էին այդ մարդիկ, ինչ էին արել նրանք:

Դատաւորը գիտէ, դատաւորն էլ պատասխանատու է: Ձեռքը անում է այն, ինչ որ կամենում է տէրը:

Մի անգամ, երբ էր Լին մի ճարպիկ և ուժեղ անուամով մէկ ընտել կռիւ, իսկ կողքին չէրան և պատժի սպասող դատա-

ւանելու, ի միջի այլոց և էնայի համալսարանի կենդանաբանութեան ուսուցչապետ էրնատ Հեքէլին, որը ամենայն իրաւամբ համարվում է դարվինականութեան ժամանակակից ամենատաղանդաւոր ներկայացուցիչը և Բերլինի համալսարանի հոմէոպաթիկական ուսուցչապետ հանգուցեալ Թ. Մօզէլին: Տիկին Փրապանը բարեկամաբար մեր տրամադրութեան տակ էր դրել գիտութեան այդ երկու խոշոր կորիֆէաներից ստացած նամակ-պատասխանները: Դրանց բովանդակութիւնը դժբաղդաբար վերին աստիճանի յուսահատեցնող են, բայց և մի և նոյն ժամանակ շատ բնորոշող Գերմանիայում հայերի մասին տիրող հասարակական կարծիքի համար:

Աւելորդ համարելով գրքի բովանդակութեան մասին խօսելու, կասենք միայն, որ աշխատութիւնը բաւական լուրջ է, փաստալից և հիմնված այդ նիւթի մասին եղած գրականութեան վրա, որ իր ժամանակին բաւական զորեղ տպաւորութիւն է թողել լսող գերմանացի հասարակութեան վրա:

Լ. Բարայեան

Թիֆլիս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բագուի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգից այնտեղ եկած բժշկական ընդհանուր վերատեսուէր պ. Ֆօն-Անրէպը յուլիսի 22-ին այցելել է տեղական հիւանդանոցը հոգեկան հիւանդների համար: Այդ հիւանդանոցը գտնվում է հայկական թաղում, Շամախու թաղից այն կողմ: Պ. Ֆօն-Անրէպը գտել է հիւանդանոցը բոլորովին անհամապատասխան իր կոչումին: Երկրաշարժը բաց է արել բաւական մեծ պատուվածք շէնքի պատերի մէջ և այդ շէնքը կը կործանվի, եթէ մի նոր երկրաշարժ էլ տեղի ունենայ: Հիւանդանոցի առանձնահատկանքները սաստիկ խնամ են. արտաքինը գտնվում է շէնքի բակում, սենեակներից բաւական հեռու՝ այնպէս որ անձրեւի ժամանակ հիւանդները, որ ի հարկէ միշտ առանց կրկնաօղջիկի են, ստիպված են ցնիտովել և ցնիլ բերել սենեակները, ուր պէտք է խկապէս օրինակելի մարմնութիւնը թաղաւորէ: Իսկ իբր թագ ու պակ բոլոր պակասութիւնների՝ մի նոր ու չը տեսնված սրամտութիւն—առանձնաբանները տաքացնում են ծուխով: Այդ—ծուխով: Մի սեռ ընդհանուր վառարանից խողովակ է տարված բոլոր սենեակները, ուր ծուխ է բաց թողնվում իբրեւ տաքացնելու միջոց: Արդեօք շատ հեռու են մեր երկրի միւս գիտնոցներն այդ նկարագրածից:

Թիֆլիսի քաղաքի անանուն ընկերութիւնը, վերջացնելով հին գծերի էլէքտրաբաշտի համար յարմարեցրած ընկերի վերածելը և էլէքտրական հոսանքների ու թէկնի համար

պարտվածը, ըստ սովորութեան, աղաղակեց. —Խօ:

Լին ցնցվեց. ձայնը նրան ծանօթ երեաց: Նա աչքը գցեց «խօ» աղաղակողի վրա, և զգաց, որ իր ձեռքը թուլացած ցած է իջնում, և սուր ասքափելի ծանր է:

Դա նրա եղբայրն էր: Կրտսեր և միակ եղբայրը:

Գունատված դէմքով, սարսափից աչքերը չռած՝ նա նայում էր Լին և սպիտակ դողդողում. շրթունքներով ճիգ էր թափում ժպտալ դահլիճի երեսին, որպէս զի չը տանջէ:

Բայց զի մի վայրկեան էր միայն:

Օգնականը արդէն բռնեց դատապարտվածի ծամից և գլուխը քաշեց, դէպի առաջ:

Լին ցատկեց դիակի վրայից և կանգնեց դատապարտվածի գլխավրը:

Նրա առջև ձգված էր պարանոցը, որի մէջ մի ինչ որ բան գտնուել էր ու ցնցվում:

Լին բարձրացրեց սուրը:

Առեւտրականները ծածկեցին իրանց ապրանքները արիւնքի ցայտուններից:

Ամբողջ փոքր ինչ յետ քաշվեց:

Միւս դատապարտվածները, որոնք չորած էին շարքով, գունատված դէմքերով, պատրաստվում էին աղաղակելու.

—Խօ:

Լին աչքերը խփեց:

Մուրը, որ բարձրացած էր գլխավրը, սարսափելի ծանրութիւնից դէպի յետ էր ձգվում: Լին երկրորդ էր: Նրա ծնկները ծալվում էին: Անա իսկոյն սուրը նրան բոլորովին յետ կը ձգէ և նա վայր կընկնի մէջքի վրա:

—Ձեռքը դատաւորին է: Ձեռքը, ձեռքը, կրկնում էր նա ինքն իրան:

Եւ, կրկնապէս, բոլոր ոյժեր հաւաքեց և ինչեղեց սուրը:

Վողորցնեալ սիւնը, ցնցվել, ներկայ տարվայ գեկտեմբերին կը ձեռնարկէ նոր գծերի հիմնարկութեանը: Նոր գծերից առաջին տեղը բռնելու է երկաթուղու կայարանից Միքայէլեան փողոցը բերող ճանապարհը, որը պէտք է մրցէ Աւճալեան փողոցի ձիաքարշի հետ: Յետոյ Հաւաքար-Նաւթուղու և վերջապէս՝ Դի-գորէի գծերը: Իսկ հետեւել տարի կը սկսվի Երևանի հրապարակից, մինչև Փոնիկուլիօրի ներքին կայարանը տանող գծի կառուցումը:

Յուլիսի 17-ին Կիսլովոդսկում երկաթուղու ծանր հիւանդութիւնից յետոյ մեռաւ Շաշու ընտանեկան դպրոցի տեսուէր Ալէքսէյ Գրիգորիովիչ Չեպիգով՝ 42 տարեկան հասակում: Նրա հիւանդութիւնն էր կոկորդի թոքախտ:

Հաղորդակցութեան ճանապարհների միջնատրուութիւնը տեղեկացրել է Անդրկովկասի երկաթուղիների վարչութեանը, որ ժող ապագայում հիմնվելու է մի յանձնաժողով, որը բաղմանկողանի ընտելութեան է ենթարկելու այդ ճանապարհները և ճշգրտեցնուր: Որոշելու է նրանց փոխադրական կարողութիւնը, նոյնպէս և միջոցներ է որոնելու նրանց առեւտրական գործունեութիւնը բարելաւելու համար:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Հեռաւոր-Արեւելից Մոսկվա են բերել մի խումբ հոգեկան հիւանդներ, բաղկացած 13 օֆիցերից և 8 զինուորից: Դրանց տեղաւորելու են Մոսկվայի հոգեկան հիւանդների հիւանդանոցներում:

«Խօ» լրագիրը հաղորդում է, որ ս. սինօգում հարց է ծագել թոյլատրելու կրեմատորի (մեռելներին այրելու գործիք կամ փուռ) գործածութիւնը Ռուսաստանում: Այդ հարցն առաջացել է նրանից, որ մի քանի օտարահապառակ համայնքներ խնդրաւարաւորեցին եղել գոնէ իրանց գերեզմանատներում թոյլատրել կրեմատորի գործածութիւնը:

Կովկասեան տնայնագործական յանձնաժողովը ուղարկել է պ. Կ. Կարա-Մուրզային Բագուի նահանգը և Դաղստանի շրջանը տեղի վրա իսկ պարզելու այնտեղի տնայնագործների մէջ բնակական գոյնքի գործածութիւնը գորգագործութեան մէջ:

ԲԱՊՈՒԻԹ մեզ գրում են. «Շատ տարիներ է, որ ներկայ տարվայ պէս զով ամառ չենք տեսել: Ամեն օր շարունակ փչում է հիւսիսային բամբին և թարմացնում բնութիւնը և կենդանութիւնը ներշնչում ամառանոցներից դուրս բնակիչներին»:

ՁԱՋՈՒԻԹ մեզ գրում են. «Սօւրբայից խոյս տալու համար միջոցներ են գործ դնում

Լին լսեց այն, ինչ որ երբէք չէր լսել: Նա լսեց հեկեկանք:

Իսկ ետման ջրի ցայտունների պէս երկու տաք ցայտուններ խաչեցին նրա դէմքը:

Միշտ արեւուն ցայտում էր Լին դէմքի վրա: Բայց ոչ մի անգամ այդպէս տաք չէր եղած:

Լին բաց արեց աչքերը և տեսաւ ծնկների վրա ջրաձգորէն թաւալող արեւնաշաղախ պարանոցով մարդուն:

Սուրբ սահել էր կողքից ու թոցերի միմիայն գանգի կաշին:

Հոսող արեւնի միջից սպիտակին էր տալիս ոսկրը:

Միւս դատապարտվածները, ամբողջ մարմնի վրա ծածկոցներ զգալով, նայում էին Լին:

Ամբողջ աղաղակում էր սարսափից, զայրոյթից, անհամբերութիւնից:

Լին աչքերը խփեց և նորից բարձրացրեց սուրը:

Եւ նորից կասեւ սարսափելի ծանրութիւնից սուրը նրան յետ քաշեց, ապա Լին ձեռքերը թուլացած կախ ընկան սրի ծանրութիւնի:

Եւ նորից կասեւ եռացած ջրով սրակցին Լին երեսը:

Եւ նորից լսեց աղիղորմ հեկեկանքը:

Լին բաց արեց տաք արեւնով խաչված կոպերը և տեսաւ ամբողջ արեւնաշաղախ պարանոցը:

Եւ լսեց Լին տակաւին մէկի սոսկալի հեկեկանքը, սարսափից դողալով: Դա հեկեկում էր ինքը Լին:

Նա ծանր էր շունչ քաշում:

Իսկ դատապարտվածը, կծկվելով՝ տանջանքից այլանդակված երեսը բարձրեց դէպի նրան, և, շնչառապառ ասաց.

—Եղբայր, ինչո՞ւ ես ինձ տանջում:

Նամանակէս: Ձապարհ և նրա շրջակայ գիւղերը, որոնք մշտապէս մատնված են ցեղի և ամեն տեսակ կեղտոտութիւնների վերջապէս յուլիսի 22-ին տանուտէրը գիւղական դատարանում հաւաքելով բոլոր գիւղացիներին խիստ պատուէր տուեց, որ թէ անեք և թէ փողոցները այսուհետեւ միշտ մաքուր պահեն, ոչ մի տեղ աղտոտութիւն չը լինի, հակառակ դէպքում մաքրութիւնը չը պահպանուի կենթարկվեն խիստ տուգանքի: Դիւղացիք լաւ գիտեն խօյրայի ֆիսաները, որովհետեւ 1892 թ. խօյրան այդ գիւղերից էլ գոնէր տարաւ, ուստի բոլորն էլ խոստացան մաքրել ամեն տեղ»:

ՇՈՒՇՈՒԹ մեզ գրում են. «Երէկ, յուլիսի 13-ին, Մ. Խանդավերեանի դահլիճում, հայ դերասանական դրամատիկ ընկերութիւնը, ղեկավարութեամբ Յ. Աբէլեանի, ներկայացրեց «Սորատուգլած դանգ» ֆէերիան, հէքթաթ 5 ար., Հաւաքումանի: Ինչպէս երեւում էր, հասարակութիւնը հետաքրքրվել էր այդ արտասովոր հէքթաթով և իր ներկայութեամբ լցրել էր դահլիճի: 3/4 մասը: Սակայն շատերի՝ նոյն իսկ quasi ինտելեկտներին համար այդ հէքթաթը անդունդի մնաց և խեղճերը շուտաւճ ցրվեցին տները: Խաղը ընդհանրապէս սառը բնաւորութիւն էր կրում և եթէ աւելացնենք այն, որ օր. Խիթարեանը իր դերը (Բաուդեն-գէլից, յաւերժաբա) չէր սովորել և տեղտեղ ուղղակի կծկում էր ու անելանելի դրութեան մէջ ընկնում,—պատկերը լրել էր լինի: Հասարակութիւնը ոգևորութեան նշաններ չը ցոյց տուեց, և հարկաւոր կերպով չը վարձատրեց դերասանների խաղը սովորական ծափահարութեամբ: Այս բոլորը այսպէս լինելով, ակամայ մի հարց է առաջ գալիս. արժէ՞ր արդեօք այդ ֆէերիա հէքթաթը դնել: Շուշու բնի վրա, քանի որ...»

ԲԱՊՈՒԻԹ մեզ գրում են. «Այս տարի տեղի Կայսր Ալեքսանդր III-ի առաջին կլասիկական գիմնազիան աւարտեցին 64 աշակերտ, որոնցից 14-ը արժանացան ոսկեալ և 2-ը արծաթեալ մեդալների: Գիմնազիան ունի, բացի պատրաստականութիւնից, 8 հիմնական և 14 զուգընթաց դասարաններ: 1150 աշակերտներով, որոնց մեծամասնութիւնը հայեր են: Հայոց երեք տասներ անցնում են այստեղ միայն պատրաստական և առաջին չորս դասարաններում: Այժմ գիմնազիայի կրօնի ուսուցիչ Գրիգորեանց աւագ քահանայն հարց է դրելքեցի, որ հնարաւոր դարձնել կրօնի դասերը բարձր դասարաններում, և անցնելու»:

ՁԱՋՈՒԻԹ մեզ գրում են. «Ահա մի շաղաթ է, որ Չալուքի և միւս գիւղերի հունձը սկսվել է: Այժմ հասել են դարձ արտերը, 2 շաղաթից յետոյ կը սկսվի ցորենի հունձը:

—Խիթը, աղաղակում էր վրդովված ամբողջը:

Լին հաղի էր կանգնած ասի վրա:

—Խիթը, ասաց, նա օգնականին, մեկնելով նրան սուրը:

Երբէք սուրը դեռ նրան այդքան ծանր չէր երեացի:

Օգնականը վեռ թուաւ տեղից և ծիծաղելով աւ գոհ, որ իսկոյն իրան սլուի ցոյց տալ, խլեց սուրը և այնպէս վրա բերեց, կասեւ ձեռքին փետուր լինէր:

Լին պղպղեց, աչքերը խփեց, առաջնորդ սեղից և որքան ոյժ ունէր քաշեց դէպի իրան եղբոր գլուխը ծամից բռնած:

Որքան ժամանակ տեկց այդ բանը, Լին չը գիտէր:

Անկեղծ խիտում էին, ինչպէս երկու մուրճ սարսափելի ոյժով ու ցաւով:

Նա ծամից ամուր բռնած էր:

Եւ յանկարծ կասեւ մէկը նրան հրեց:

«Խօ» աղաղակի միջից, Լին լսեց մի ինչ որ զրշոյց:

Նրա ձեռքին կարծես էլ ոչինչ չը կար:

Լին ընկաւ երեսի վրա և գլխովայր գլուխ վեց եղբոր կտրած գլխի ծամից բռնած:

Ամբողջ հաւաք:

Իսկ Լին գետնատարած ընկած էր, անզօր տեղից բարձրանալու, ամբողջապէս շարքված, ոտից մինչև գլուխը շաղախված արեւնով, որը կարծես ետ էր գալիս նրա վրա:

Նա սարսափով նայեց կապոյտ երկնքին, ուր սահում էին փետուրի պէս քնքուշ ամպերը, և մտածեց.

—Երկնքը, ինչո՞ւ եմ դատապարտված տանջելու նրանց, որոնց մենք սիրում ենք:

Կ. Կրասնիլիկեան



